

ԴԵՒԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Աշխարհի ստեղծագործութիւնից առաջ՝ Աստուծոյ գահը շրջապատող հրեշտակապետների շարքում կանգնած էր և Սաղայէլը։ Նա սուղուած մտքերի մէջ, լուռ դիտում էր Ամենակալ Տիրօջ փառքը ե հետզհետէ վառւում նեխ նախանձով։

«Ջուր եմ խոնարհուել, չոքել և փառաբանել Նրան և քանի աշխարհը չէ ստեղծուած մօտեցնեմ իմ աթոռը Նրա գահին և թէ երկնքի բնակիչներին, թէ ստեղծուող աշխարհին ցոյց տամ, որ Նա մենակ չէ, որ ես ևս հաւասար կամ Նրա հետ»։ Այսպէս էր մտածում գոռ Սաղայէլը և երկար ժամանակ դեգերում այսպիսի ժանտ մըտքերով։

Ամենագէտ Աստուածն ի հարկէ հասկացաւ ամբարտաւանի միտքը և Նրան եօթներորդ երկնքից միանգամայն անդունդ գլորեց։

Դողդացին դժոխքի խորքերը, հրեղէն լեզուները կայծալնալից մինչև երկինք բարձրացին և Սաղայէլը սթափուելով, նետուեց ամեն անկիւն, անցաւ դժոխքի բոլոր բաժինները, հուրը բորբոքեց, սանդրամետի սառուցները ճաթճթեց, ժանտահոտեց ճահիճները, ապա ժողովեց բոլոր դեերին, խրատներ ու յորդորներ կարդաց, օրէնքներ սահմանեց և հրամայեց ամենքին խստիւ վերաբերուիլ Աստուծոյ արարածների հետ և գէթ այնու-

հետև ցոյց տալ, որ որքան մեծ ոյժ կայ երկնքում, նոյնքան և անդունդի խորքում:

—Այսուհետև, ասաց Սադայէլը, մեր, Աստուծոյ արարածների և գլխաւորապէս մարդկային ազգի մէջ ահռելի վիհ է բացւում, նրանց պէտք է միշտ մեր ճիրաններում պահել, մեր ցանցերում կաշկանդել և դժոխքի բաժիններում տեղաւորել: —մենք կզուարճանանք, տեսնելով նրանց այրուելիս, մթութեան մէջ ատամ կրճելիս, սառուցների վրայ դողալիս, ճահիճների մէջ զեռունների խայթերով հեծեծալիս, օձերի և վիշապների խաղալիք դառնալիս:

Սատանաները սարսափելի ճգնաճեղքով իրանց պատրաստականութիւնը յայտնեցին և զգուելի դուարճութեամբ դժոխքի այս ու այն անկիւնները նետուելուց, դուրս եկան և անցան երկրի խորքերը:

Անխնայ Սադայէլը իւր անդրանիկ շարութիւնը ըսկսեց նախաստեղծների հետ և լուսեղէն կեանքից սթափեցրեց նրանց, մերկացրեց և Ատուծոյ բարկութեան արժանացրեց: Նրա շնորհիւ ոչ միայն նախաստեղծները սաստիկ պատիժ կրեցին, այլ և ծանր անէծքի արժանացաւ օձը, վասնզի նախաստեղծներին նրա կերպարանքովն էր երևացել նզովեալ դեր: Դրանից յետոյ նա իւր շարութիւնների ծրագիրներն ընկարձակեց, որոնք մի առ մի պատմելով սատանաներին շարունակ գովեստներ ու խրախոյս էր վայելում նրանցից:

«Պէտք է մի ծանր թշնամութիւն հաստատեմ եղբայրների մէջ»: Մտածեց նա և իւր այդ միտքն իրագործելու, դիմեց աշխարհի անդրանիկ եղբայրներին:

Նւ այն ժամանակ, երբ Պայէնը սրտով դառնացել էր՝ Աստուծուն իւր մատուցած ընծայի առթիւ և իւր մէջ ատելութիւն էր տածում դէպի եղբօրը, որ արժանացել էր Ամենակալ Տիրօջ շնորհին, մօտեցաւ նենգամիտ

դեր և ասաց նրան. «տեսար թէ Աստուած որքան նախատեց քեզ, ճշ, այդպիսի պարտութեան անկարելի է հանդուրժել, դու մեծ եղբայրն ես, դու պէտք է ցոյց տաս քո մեծութիւնը, քո գերիշխանութիւնը»:

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ միջոցի դիմեմ:

Ջնջիր աշխարհի երեսից եղբօրդ անունը, այնուհետեւ միայն դու կլինիս տէր բոլոր աշխարհի:

Դեր սովորացրեց նրան սպանելու ձևը, յորդորեց չուտափոյթ կատարել այդ և ինքը հեռացաւ հանդիսատես լինելու աշխարհի անդրանիկ ոճիրին:

Այնուհետեւ ամբարտաւան ոգին նետուեց աշխարհի այս և այն կողմերը և մարդկային ազգի աճելու ընթացքին համարայլ՝ շարունակեց իւր ժանտամահ չարութիւնները: Եղբայրասպանութիւնից յետոյ օրէնք դրաւ և ծնողասպանութեան, ընկերասպանութեան, դաւաճանութեան, մատնութեան, աւազակութեան, դողութեան և այլն: Խօսքով անիծեալ ոգին անձանձիր շարունակում էր Ամենակալ Տիրոջ բազմառատ բարիքների դէմ մարդկանց մէջ ցանել և վանազան չարիքների սերմեր: Եւ այդպէս մարդը ծնուելու օրից ստիպուած է լինում կեանքի բոլոր ընթացքում բարութեան յենուած՝ մաքառել և չարութեան դէմ, վասնզի, ինչպէս տեսանք, բարութիւնն ու չարութիւնը տխրութեան և ուրախութեան հետ միասին են ծնուում: Եւ դէն իւր թագաւորութիւնը աւելի ազատ շարունակեց մինչև Աստուածորդւոյ աշխարհ գալը: Նրանից յետոյ թէպէտ նա հետզհետէ ընկճուեց, այնուամենայնիւ մարդկային ազգի թոյլ կողմը իսկոյն ըմբռնելով, նա միջոց էր առնում և իւր յախուռն ոճիրները առաջ տանում:

Մեծամեծ մարդկանցից շատերը ազատ չեն մնացել դերի ճիրաններից: Սաղմոսերգու Դաւիթն էլ շատ անգամ հաւատացել է նրան: Եւ երբեմն իբրև նսնմութիւն իւր Աս-

տուածային ոգոյն քիչ ոճիրների չէ տեղիք տուել: Օրինակի համար անգամ բաւական է յիշել այն առիթը, որով գրել է «Ողորմեան ինձ Աստուած» սաղմոսը: Միայն Աստուծոյ որդին, որ Աստուած էր, իւր մարդկային կերպարանքի մէջ էլ անյողգողգ մնաց, յանդիմանեց չար ոգոյն և նախատինքով հեռացրեց իւր մօտից:

Սակայն Նրա ընկերը, որ աշակերտն էր և Որին այնքան սիրում էր, հետեւելով չար, անիծեալ ոգոյն, չեղուկով Սրբաւանդ պատուիրաններից, մարդկութեան մէջ սաղսափելի օրինակ ստեղծեց,—օրինակ, որ յիրաւի սառսուռ պատեց մարդկային բովանդակ ցեղին: Այդ օրինակը մատնութիւնն էր: Մատնեց նա Նրան, որ բաժանել է իւր հետ սրտի բոլոր զեղմունքը, երկնի և երկրի բարիքները:

Եւ լսելիչ հրճուանքով դարձաւ դեր Յուդային:

—Ինչո՞ւ համար այդքան խոնարհուած երկրպագում ես Դրան, չէ՞ որ այն փառքը, որ վայելում է Դա և որ պիտի վայելէ կարող ես և դու ունենալ:

—Ի՞նչ անեմ ուրեմն, ասած ինձ:

—Ոչինչ, մատնիր նրան ամբոխի ձեռք, ես այդ ամբոխին էլ արդէն պատրաստել եմ և մէկ մէկ ամենքին հասկացրել իմ ոյժը. մատնիր, ասում եմ, թող Նրան չարչարեն, թաւալեն արեան մէջ, մեռցնեն և ցոյց տան աշխարհին, որ նա չունի այն զօրութիւնը, որի համար այնքան խօսում է:

Բայց նա մեռնելուց յետոյ յարութիւն պիտի առնէ և Աստուծու աջ կողմը պիտի բազմէ:

—Սուտ է. չէ՞ որ մի ժամանակ ես էլ Նրա աջ կողմումն էի, ինչո՞ւ ուրեմն այդպիսի մի տեղեկութիւն չիմացայ, սուտ է, կատարեալ սուտ. դու գնա, Յուդա, մի ուշանար, քանի ամբոխը բորբոքուած է, գնա մատնիր նրանց ձեռք, դու դորա համար զեռ երեսուն ար-

Ժաթ ևս պիտի ստանաս և միշտ իմ շնորհը պիտի վայելես:

Բայց ես, ով Սաղայէլ, չեմ կարող մատնել Նրան, որ այնքան ինձ սիրել է, այնքան սփոփել և խնամել. ո՛չ, չեմ կարող ես Նրան յանձնել չար ամբոխի ձեռք:

Լռիր, այդ ամբոխը չար չէ, նա իրաւացի է, արդար է, իսկ եթէ ընկերդ քեզ այդքան լաւութիւններ է արել, չէ՞ որ այդ բոլորը միմիայն նրա համար, որ գործիր դարձնէ քեզ իւր ձեռին, որ քեզանով պատիւ ու փառք վաստակէ, միթէ չե՞ս հասկանում, որ Նրա մահով քո փառքը կբարձրանայ և քո անունը կլիշուի դարէդոր, Նրա անմիտ վարդապետութիւնները ո՞նչացնելով, դու կոչնչացնես և աշխարհին հասանելի վտանգը, գնահ, մի տատանուիր, ես քեզ հետ եմ, ես ոյժ ու զօրավիգն կլինիմ քեզ, գնահ, արահ ինչպէս ասում եմ, իսկ ես ահա գնում եմ նոյն ամբոխի տրամադրութիւնն աւելի վառել:

Յուդան փոքր ինչ վարանելուց յետոյ, խոնարհուեց դէի առաջ, համոզուեց, որ Աստուածորդւոյն մատնելով չարերի ձեռք, ինքը յաւիտենական փառք և պատիւ պիտի վայելէ:

Հետեւելով դէի խրատներին, անզգամ Յուդան զնաց Կայխափայի մօտ, յայտնեց իւր դիտաւորութիւնը, երեսուն արծաթ առաւ, ժամ որոշեց և որոշած ժամին աշխարհի Փրկչին մատնեց անօրէնների ձեռք, անարգ խաչին հասցրեց և Գողգոթայ բարձրանալուն արժանացրեց: Սակայն ժամագիր դիշերը, երբ Գեթսեմանի պարտիզով իբրև նշան մատնութեան՝ մօտեցաւ, համբուրեց Յիսուսին և երբ լսեց Նրա մեղմ և անդորր ձայնը «Յուդահ, համբուրելով ես ինձ մատնում» յանկարծ դողաց ամբողջ մարմնով: Այդ վեհ, խաղաղ դէմքով և բաղքը ձայնով արտասանած խօսքերը սլաքների պէս խոցոտեցին Նրա բարացած սիրտը, նա այդ իսկ ըրպէին ըմբռնեց, որ յի-

բաւի Դա Աստուծոյ որդի է և Աստուած: Սաստիկ յուզուած դուրս եկաւ Գեթսեմանից, նետուեց խաւարը, անցաւ բնութեան խորքը. վարանեց անդադար, բայց ծանր վրդովմունքից բնաւ չկարողացաւ հանգիստ առնել: «Նա Աստուած է.» շշնջաց ինքն իրան: Իսկ երեսուն արծաթը կրակի կտորների նման այրում էին նրան և նա հանեց նրանց ու թաղեց դետնի տակ:

Այդ միջոցին խորին հրճուանքով դէր կանգնեց նրա առաջ:

— «Ի՞նչ է, Յուդա, ասաց նա. ինչո՞ւ ես այդքան յուզուելի:

— Ո՛հ, չար. ոգի, այս ի՞նչ էր քո արածը, ես հանգիստ եմ կամենում և ահա չեմ գտնում, նրա շրթունքներից հուր թափուեց իմ ներսը, նրա խաղաղ ձայնը, բաղցր խօսքերը շանթահարեցին ինձ. ո՛հ, դու ինձ խաբեցիր, Նա Աստուած է, թող, թող գնամ նետուիմ նրա ոտքերը, գլխով թիւն, ողորմութիւն հայցեմ:

— Զո՞ւր է, Յուդա, նա արդէն մեռած է և վերջապէս ինչո՞ւ դու ինձանից չես պահանջում հանգստութիւն:

— Տո՛ւր, տո՛ւր ուրեմն:

— Իսկոյն, ահա քեզ հանգստութեան ճանապարհը. կախուիր այս ծառից, թող մարմինդ այս անպիտան աշխարհում և որսվհետև նրա հոգին, որին դու մատնեցիր պիտի երկինք սլանայ, տուր ինձ քո հոգին, ես կտանեմ իմ ապարանքը, հուր, սառուց իրար խառնած պատուանդան կշինեմ ոտքիդ տակ, իմ բիւրաւոր խմբերը սպասաւոր կլինին քո առաջ, դու կլինիս ամենքից երջանիլը և բաղտաւոր բոլոր՝ ստեղծուածներից:

Վերջին անգամ ևս Յուդան հետևելով դէին, կախուեց, խեղդամահ եղաւ և մեղապարտ հոգին յանձնեց դէին, որ առաւ և բորբոքուած հնոցը նետեց:

Այսպիսի նենգ յաղթութեամբ հրճուելով դէր, անցաւ դարձեալ աշխարհի գիրկը: Ուր փառք, պշրանք էր տեսնում, նետուում էր այնտեղ և ճիգ թափում բոլորը անդունդ գլորելու: Դեերից խեղճերն անգամ ազատ չեն մընում, բայց այնուամենայնիւ նրանք իբրև նեխ նախանձի ոգիներ, սիրում են աւելի դէպի այն կողմն անցնել, ուր զեղուած է ոսկով, արծաթով և բեհեզով:

Եւ ահա այդպէս, երբ մի ժամանակ Հռովմը ցընծում, ժպտում էր իւր փառքով, իւր զարդերով ու անթիւ, անհամար հարստութեամբ, երբ նա կանգնած աշխարհի կրծքին իւր վեհութեամբ սքանչացնում էր ամբողջ մարդկութեան, անիծեալ դէն այդ միջոցներում նետուեց այդտեղ: Այդ այն ժամանակն էր, երբ կայսերական գահի վրայ բազմում էր Ներոնը: Դէր նրան իւր կողմը ձգելու դժուարութիւն չունեցաւ, վասնզի Ներոնի տրամադրութիւնը դէպի ամեն մի շարութիւն վառ էր և ծարաւի:

Եւ նա բազմելով Հռովմի գահին, իւր սրտում, բազմեցրեց անիծեալ Սադայէլին: Զինուեց դժոխքի զէնքերով և դէի թելադրութեամբ արեան ճապաղիք դարձաւ ծաղկափթիթ Հռովմը: Լեռներ, ձորեր թնդացրեց Քրիստոնէից սրտաբեկ ողբերով և մինչդեռ դէն էր իւր հոգու մէջ, խղճի աննշան խայթոց չզգաց նա: Իսկ անիծեալ ոգին այնքան մնաց այնտեղ, մինչև աշխարհի պարծանք Հռովմը լացի ու սուգի տուն դարձաւ, մինչև բրիստոնէից թափած արիւնից գետեր սահեցրեց: Եւ պանծալի մայրաքաղաքը տապալելուց յետոյ միայն դուրս եկաւ այդտեղից և անցաւ աշխարհի ուրիշ խորքերը: Խաբեց անգամ թագաւորների և իշխանների, հազար տեսակ շարութիւններ հնարեց, ոճիրներ ստեղծեց և բիւրաւոր անբաղտութիւնների փոսեր բաց արաւ:

Երկար շրջեց նա, այս ու այն կողմը նետուեց, աւերակ աւերակի վրայ դարսեց, սպանութիւն, աւաղաւտեց և:

կուլթին, աւերումն ու թալանումն իրար վերայ բարդեց և տակաւին չհանգստացաւ, չզադարեց:

Մի անգամ նա մտաւ մի տուն, ուր ապրում էր մի մայր իւր որդու հետ: Գեղեցիկ, յաղթանդամ երիտասարդ էր որդին, բայց չգիտէր ոչ ուսում և ոչ մի արհեստ, այլ և ոչ մի զործով չպարապելով ծուլութեամբ ընկած էր մօր մօտ:

Սագայէլը մտաւ այդտեղ, մօտեցաւ տղային, ընտելացրեց իւր հետ և առաջարկեց նրան մեծ հարստութիւն:

— Ո՛ւր է, հարցրեց տղան, ճրտեղից ձեռք բերեմ:

— Ես քեզ ցոյց կտամ նրա տեղը:

— Ասա խնդրեմ:

— Դէհ, ուրեմն եկ իմ ետեկից:

Երիտասարդը յափշտակուած նրա խոստումով, հետեւեց նրան:

Գնաց նրա հետ դեր, մի բարձր տան առաջ կանգնեց եւ ասաց. ահա, դիտիր այս տան բոլոր մուտքերը, մտիր տիրոջ ննջարանը, նրա մահճակալի տակ պահուած են ոսկիների քսակներ, ան բոլորը, դարձիր տուն եւ դիր ամենքից հարուստը:

— Օ՛, այդ ես չեմ կարող, այդ գողութիւն է. դոչեց երիտասարդը:

— Ի՞նչ ասել է դողութիւն, կամ թող հէնց լինի գողութիւն, չէ՞ որ այդ մի արատ չէ, եթէ արատ է, ինչո՞ւ ուրեմն Աստուած այդպիսի շնորհքն էլ տուել է իւր արարածներին, այո, այդ շնորհքը նրա տուածն է և ոչ իմ և ինչ որ նրա տուածն է, չէ՞ որ դուք, նրա արարածներդ պարտաւոր էք ընդունել, եկ, եկ իմ ետեկից, ես քեզ բացի բարիքից, ուրիշ ոչինչ չունիմ անելու և հաւատա, որ այն հարուստը ևս ոսկիքն ու արծաթը ձեռք է բերել իմ ցոյց տուած ճանապարհով, իսկ իմ ճանապարհները յայտնի են:

— Միթէ դու նրան ճանաչում ես:

— Հա, հա, հա, ես կարող եմ չճանաչել նրանց, որոնք տէր են դարձած իմ սիրելի ոսկուն և արծաթին, չէ՞ որ այդ փայլուն մետաղները իմ իշխանութեան են պատկանում, արդ՞ ում մօտ պիտի լինին նրանք, որ ես չիմանամ: Դնանք սիրելիս. ես կամենում եմ բարութիւն անել, թաւական է, որքան նրանք ուրախութիւն են բերում մէկին, թող այսուհետեւ էլ նրանք բեզ ուրախացնեն, ես այդպէս եմ կամենում, վասնզի իմ ցանկութիւնը բոլորին ուրախացնելն է, հասկացա՞ր:

— Իսկ եթէ ես բռնուեմ և բանտարկուեմ:

— Դու անհոգ կաց, ես միշտ քեզ հետ կլինեմ և ամեն վտանգից կազատեմ բեզ:

— Իսկ ինձ նեղութիւններ չմ'ն հասցնիլ:

— Երբէք, ընդհակառակը, դրանից յետոյ ես ցոյց կը տամ քեզ հարստութեան ուրիշ աղբիւրներ, որոնց տիրելով դու կգառնաս աշխարհիս երեսին նշանաւոր մարդ, քեզանից կվախեն շատերը, կյարգեն քեզ և միշտ խոնարհ կլինին քո առաջ:

Երիտասարդը սուղուեց մտքերի մէջ: Երկար մտածեց, մերթ համոզուեց դէի հետ, մերթ տատանուեց: Սակայն երկար տատանումներից յետոյ խոնարհուեց դէի առաջ, և հետեւեց նրան: Երբ գիշերը հասաւ և աշխարհն անցաւ Մուրփէոսի գիրկը, երիտասարդը զանազան գործիքներ ձեռք բերելով, դիմեց դէպ այն ապարանքը, ուր ինքն արդէն ճանաչել է և ուր կամենում էր ձեռք բերել այն ոսկիքն ու արծաթի բաւկները, որոնց համար այնքան լսել էր դէից: Սյդտեղ իւր նպատակին հասնելու համար, սպանեց մի երկու անձանց և միայն մի բանի ոսկի ձեռք բերելով կարողացաւ փախչել և կորցնել իւր հետքը:

ձանապարհին պատահեց դեր և մի խոր բրբիճով ու հրճուանքով դարձաւ նրան:

— Ցեննում ես, տեննում ես, ինչպէս աջողեցրի, ուրեմն շնորհակալ ես, որ այդպիսի շնորհք տուի քեզ:

— Է՛, այսքանն ինչ անեմ. ասաց երիտասարդը:

— Այլքանը չէ միայն, սիրելիս, սպասիր. դու պէտք է մի բանի ընկերներ ես ունենաս, որոշիր ընկերներդ, ես կիմանամ նրանց տեղը և կսովորացնեմ, որ հետեւն քեզ:

— Ես ինչ պիտի անեմ ընկերներիս հետ:

— Ահա թէ ինչ, անտառի խորքով կարաւան է անցնում, բոլոր ուղտերն ու աւանակները բեռնուած են ոսկով, արծաթով ու բեհեզներով. դնա, ընկերներիդ հետ կապիր այդ ճանապարհը, կոտորիր տէրերին և կողոպտիր բոլոր ունեցածները. օ, ինչքան պիտի հարստանաս:

— Բայց գուցէ նրանք կանայք, երեսաներ ունին, ես խղճահարոււմ եմ, ես չեմ կարող նրանց ձեռք տալ:

— Դատարկ խօսքեր են, ընդհակառակն նրանց լացն ու ճիչը մի առանձին հանդէս են սարքում և իրանց արեան մէջ թաւալուելով գեղեցիկ տեսարան են կազմում, թող վերջապէս հրեշտակների հոգսն աւելանայ, թող վանայդ հոգիները տանեն ուր և կամենում են, իսկ դու իմն ես և ես միշտ քեզ հետ եմ:

Համոզուեց երիտասարդը, լսեց չար դէին և արաւ այնպէս, ինչպէս որ նա սովորեցրել էր. թալանեց կարաւաններ, թափեց բազմաթիւ անմեղների արիւն, թըշուառութեան հասցրեց շատ բաղդաւորների և անգամ խեղճերի, պղծեց սրբութիւններ, սակայն տարիներն անցան և այդ ժանտ կեանքի հոսանքները յոգնածութեան կնիք դրին ճակատին:

Դեն էլ մի առ ժամանակ հեռացել էր նրանից:

Այդ միջոցներում իւր ճանկերում ալոորութեան կնիքն առած երիտասարդը փոխել էր իւր սովորութիւնները։ Դեկ բացակայութեան ժամանակ հանգստացել էր խալառ։ Եւ երբեմն երբեմն իւր զոհերին յիշելով խղճահարւում էր, արտասուք էր թափում, մտնում էր Աստուծոյ տաճարը, համբուրում սուրբ քարերը և զղջումն հայցում։ Զարականների անոյշ ձայնը, մեղեդիների թովիչ եղանակները, սաղմոսների խորհրդաւոր խօսքերը և սուրբ աւետարանի խրատները նա լսում էր և նախ՝ սառսուրում ամբողջ մարմնով, ապա շօրում, հայեացքն առնում սուրբ խորանին ու երկար աղօթում։ Այդ միջոցին նա քաղցր թեթևութիւն էր զգում ծանրացած սրտի և հոգու մէջ։

Մի օր նա հիւանդացել էր։ Դեկն էլ լսել էր նրա փոփոխութիւնը և շտապել էր դէպի նա։ Սակայն այս անգամ նա անկարող եղաւ նրան մօտենալ, վասն զի այժմ նա ձեռին աւետարան ունէր բռնած, կրծքին խաչ կախած, իսկ շուրջը կնդրուկով բուրուած։ Կատաղել էր դեւը, գրոհ էր տալիս այս և այն կողմը, կրտճում էր աւտամները, բայց չէր կարողանում ներս մտնել։ Խաչ ու աւետարան էր այնտեղ, իսկ նա վախում, հեռանում է նրանից, ով աւետարան է առնում իւր ձեռը և խաչ կախում պարանոցից։

Դեւը նայում էր պատուհանից։

Հիւանդը մերձ ի մահ էր։ Նա թեքել էր գլուխը մօր կրծքին։ Իսկ մայրը համբոյրներով և արցունքներով փայփայում էր նրան։

— Աղօթիր, զաւակս, ասում էր մայրը, զղջա՛ն յանցանքներդ, փրկութիւն հայցիր տէր Աստծուց և նրա Փրկիչ Որդուց։ Խոստովանիր մեղքերդ և թեթևութիւն կզգաս քո սրտի մէջ, համբուրիր Խաչը, Աւետարանը, խոստովանիր Փրկչին, որ դու նրա առաջ մեղա-

ւոր ես, խոստացիր, որ այլ ևս չարութեան չեմ դիմիր, որ յանցանքներդ կբաւես խեղճի արտասուք սրբելով և Տիրոջ պատուիրանները պահելով:

Հսում էր դեր և տեսնում նրա աղիոգորմ դրութիւնը, այլ և նրա քաղցր զգուանքները և այս անգամ կատաղելու փոխարէն, մայրական այդ փայփայանքների առաջ մեղմանում, ինքը ևս զոջում և անգամ մօր կաթով գին արտասուքի հետ ինքը ևս արտասուք թափում:

— Մայրիկ, փրկիր ինձ, ես մեռնում եմ:

— Ո՛հ, սիրելի զաւակս. գոչում էր մայրը, ողբում, աղի արտասուքով ոռոգում որդու ճակատն ու այտերը, համբուրում, գուրգուրում այն ձեռները, որ երբեմն հարկւրաւոր կեանքի վերջ է տուել, նա սեղմում էր կրքոյին մայրական բոլոր սիրով և խանդով:

Յիւանդը հետզհետէ նուաղում էր և հանգչում: Բոպէն մօտեցել էր և մահուան մանգաղը շողում էր նրա գլխին:

Մայրը իւր ողբերով լեռներ էր թնդացնում, իսկ դեր կուչ եկած լուռ նայում էր և երբեմն արտասուում:

Մյդ միջոցին հասաւ հոգիներ ժողովող հրեշտակը և կանգնեց հիւանդի մօտ: Եւ երբ նա տեսաւ փոքր ինչ հեռու կանգնած դեիւն, մի արհամարհական հայեացք ձգեց նրա վրայ և ասաց. «անիծեալ ոգի, չբաւականացար որքան խաբեցիր, որքան քանդեցիր և որքան աղէտների պատճառ դարձար, դու, որ այս աշխարհում այս անմիտին խաղալիք դարձրիր և անբաղտ հոգին այսքան պատասխանատուութեան տէր շինեցիր, այժմ էլ եկել ես այստեղ. ի՜նչ ես ուզում, չէ՞ որ սորա հոգին մինչև անել դատաստանը մերն է, այնուհետև կորոշուի ում լինիր, կորիր, անհետացիր ուրեմն, անիծեալ ոգի:

— Ո՛հ, գոչեց դեր, ո՛չ, չպիտի գնամ, ես տեսնում եմ թէ որքան երջանիկ է սա—սա՛ որ այնքան արիւն

Թափեց, դիակներ թաւալեց, այսօր գլուխը թերել է մօր կրծքին և ահա տես, թէ ինչպէս երջանիկ է նա, տեսնում ես այդ մօրը, նրա համբոյրները, գգուանքները, ո՞վ, ո՞վ կարող է այդքան ուրախութիւն ու երջանկութիւն բերել մահամերձ որդուն, ո՞վ կարող է վշտահար սիրտը այդպիսի բերկրութեամբ զեղել, գնահատել մօտ և ասած նրան. ուր է իմ մայրը, ուր է, թող ցոյց տայ, ևս կամենում եմ հանգչիլ, կամենում եմ թողնել իմ բոլոր գործերը և այսքան տանջանքներից յետոյ գլուխս թերել մայրական կրծքին, ջերմ արտասուք զգալ ճակատիս, զըլջալ արածներս և հանգիստ լինել, ասած, ուրեմն, ասած, ուր է իմ մայրը:

Հրեշտակը լուռ էր: Նա առաւ մեռնողի հոգին և առանց խօսելու վերացաւ երկինք:

Իսկ դէր մխիթարութիւն չտեսնելով, սրբեց աչքերը և կրկին նետուեց աշխարհի խորքը:

ԱՐՇԱԿ ԿԱՅԺՈՒՆԻ

